ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 15.03.2018թ.
ժամը 15 [30]

Մասնակիցներում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ՋՈՒ ՍՎ ՀՀՍԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ Վ. Գալստյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՀԱ, ՋՏ և ԱՏ միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Զախալյան,
- ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
- ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին **«Մաժէվ» ՍՊԸ**-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, իսկ **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում «Նոմինալ տարողություն՝ 600mah կամ բարձր /ստանդարտ լիցքավորում/լիցքաթափում»-ի փոխարեն նշված է «Նոմինալ տարողություն՝ 600mah»:
- 3, 4, 5, 6 և 8-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված չեն՝ ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, փաթեթավորումը գործարանային, հրավերի պարտադիր պահանջները:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը պահանջելով շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն Մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայրը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

17.03.2018թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները՝ սահմանված ժամկետում **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները որոնք ընդունվել են գնահատող հանձնաժողովի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **«ԷԼՄԱՐԿԵՏ»** և **«Մաժէվ» ՍՊԸ**–ների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ 1, 2, 3, 4, 5, 6 և 8-րդ չափաբաժիններում **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ** –ն, իսկ 7-րդ չափաբաժնում **«Մաժէվ» ՍՊԸ**–ն և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Գնահատող, (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող,	Վ. Գալստյան
Գնահատող	Ն. Զախալյան
Գնահատող	Հ. Բարսեղյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան